

բունքի. որովհետեւ շատ աւելի գիւրին է յառաջունէն աւազակութեան մ'առջնան առնուն, քան թէ յետոյ աւազակութիւն մը զսպելը: Ասոր համար յարկեալն — ծննդեան տամանակէն յառաջ եւ վերջը՝ դռնակներն այնպէս դռնելու է, որ միայն մէկ մեղու, եւ այն՝ սողակներով կարող ըլլայ մանկէ ելլել. բաց ասորի՝ կատարեալ մուծի միայն պէտք է կերակրել:

Մեղուարուծութեան ամենէն կարեւոր գործերէն մին է մեղուները տամանակէն յառաջ բազմացնելու եղանակն: Առ այս հարկաւոր է առատ մեղու, թեկաւոր (նաեւ ծաղկանց այլեր) եւ ջուր: Այս կերպէ մեղուք իւր թէ կը մըլըրին, մարդկային ձեռաց իրենց կարգաւածն իբրեւ բնութեան պարզեւ մը կ'ընդունին եւ սովորականէն աւելի ձու կ'ածեն: Մեղուները բազմացնելու գիտեալ տամանակէն 14—20 օր յառաջ պէտք է այս կերպ տալ: Մէկ փեթակի համար 1—2 քիւր մեղը բաւական է: Իբր փխտանակէ միջոց ծաղկանց այլեր, կրնայ նաեւ հաճաքի այլերը գործածուիլ:



ՅԱՂԱԿԱՐԿԵՆ ՏԵՍԱՆՔԱՐԵՆ

Վիեննա, 25 Մարտի, 1893:

Իտալիոյ Թագաւորն ու Թագուհին իրենց ամուսնութեան 25ամեայ յոբելեանը կատարեցին ամուսնայ քսանին մեծ շքերդութեամբ: Ամէն տէրութիւնը ներկայացուցիչներ խաղաժ էին ի հռոմ. իսկ Գերմանիոյ կայսրն եւ կայսրուհին հանդերձ ուղեկցօք անծամը գնացին Հռոմ, եւ մեծ հանդիսիւ ընդունուեցան: Կայսրն այցելութեան գնաց նաեւ Սըրազան Բահանայապետին: — Յոյն օրը կատարուեցաւ Պուլկարիոյ իշխանին ամուսնութիւնն Փարմայի դքսին երիցագոյն դստեր հետ՝ վերջնոյն ծնողաց ամսարանցիւն մէջ: Իշխանը հագիւ մայիսի կէսերը պիտի հասնի Սոֆիա:

Բեղգիոյ մէջ մեծամեծ եւ արիւնհոյ խռովութիւններ եղան, հարիւր հազարներով զործաւորներ զործադուլ եւ արիւնալից դիմադրութիւններ ըրին կառավարութեան ընտրողական նոր օրէնքին առիւ: Յայտմ՝ Բեղգիոյ մէջ հագիւ թէ երկու հարիւր հազար անձինք ծայն ունէին ընտրութեանց մէջ. զործաւորք եւ այլ կողմնակցութիւնք լիակատար ընդ-

հանրական ընտրութեան իրաւունք կը պահանջէին, մինչ ուրիշ կուսակցութիւնք թեւէ կ'ուզէին ընդլայնել ընտրողաց շըւրջանը, սայց չէին ուզեր ընդհանուր ընտրողութեան: Վերջապէս այլեւայլ կուսակցութիւնք միացան այն որոշման որ մի միակն է ըլլոր եւրոպիոյ մէջ, որուն համեմատ իւրքարմաշիւր անծ իրաւունք ունենայ քուէարկութեան, ջայց ամբողջին անհամեմատ առաւել թուոյն փոխարէն որոշուեցաւ նաեւ որ քարծրագոյն դատարարք մէկէն աւելի ծայն տալ կարենան:

Սերպիոյ մէջ ամուսն 19ին նշանաւոր փոփոխութիւն մ'եղաւ: Երկրին խառնակ հանգամանաց վերջ տուաւ Աղեքսանդր Թագաւորն՝ որ ըստ օրինաց տարիէ մ'ետքը չափահաս պիտի ըլլար, այժմէն իսկ ինք զինք չափահաս հրատարակելով եւ տէրութեան սանձն իւր ծնօրն առնելով: Այս նշանաւոր փոփոխութիւնն եղաւ ամենայն խաղաղութեամբ, եւ Թագաւորն նոր նախարարներ դրաւ եւ հրամայեց նոր ընտրութիւններ ընել: Այսով նաեւ վերջաւորեցրը, որուն զօրութեամբ հրաժարեալ Թագաւորահայրը՝ Միլան չէր կրնար Սերպիա դառնալ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՌՈՍՈՒՄԵՆԵՆ

ՄԱՏՏԵՄԱԳՐԱԿԱՆ — Ծղիչի պատմութեան հասպակոտօք. 129:

ԳՐԱԿԱՆ — Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացոյ. 134: — Ջնոր Գլակ. 140: — Դպիթ Մնայողթ. 146:

ԼԵՋՈՒՄԱՐԱԿԱՆ — Սեմական փոխառեալ բառք հին հայերէնի. 148:

ՄԱՏՏԵՄԱՌՕՍԱԿԱՆ — Նոր հրատարակութիւն. 160:

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆ — Պղտկութիւն ի Հռոմ. 151: ՈՒԴԳՐԱԿԱՆ — Սեւ ծովու ուսական եղբորք. 166:

ՅԱՂԱԿԱՐԿ

ՏՐՏԵՍԱԿԱՆ — Գարունն ու մեղուարուծութիւն. 159:

ՔՐԵԿՐԱԿԱՆ ՏԵՍԱՆՔԱՐԵՆ. 160:



ՀՐԱՏԱՄԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՄԱՆԱՏՈՒ ԽՄԱՍԳԻՐ

Գ. ՈՒՓԱՏԵԼ Գ. ՊԱՐՈՆՉ

ՎԻԵՆՆԱ, ՄԱՐՏԱՐԵՆԵՆ ԹՎԱՐԱՆ